ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Մեգամարթ ՍՊԸ-ն ԷԱՃԱՊՁԲ-2026/12-1-ԵՊԲՀ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	TR3106A,elips	NORMACOM LLC	Հրդեհի ազդանշանման, տարհանման ու վթարային լուսավորության համակարգ ԵՊԲՀ Լաբորատոր մասնաշենքի «Քոբրեյն» կենտրոն: 1. գլխավոր կառավարման համակարգ հասցեային՝ 1 հատ, 2. վերահսկման ստեղնաշար հասցեային՝ 1 հատ, 3. ծխի կոմբո տվիչ հասցեային՝ 25 հատ, 4. ելքի լուսանշան՝ 2 հատ, 5. վթարային լուսավորության լամպ մարտկոցով՝ 130 հատ, 6. վթարային լուսավորության մոնտաժման հաղորդալար՝ 40 մ, 7. ձեռքի հասցեային ազդասարք՝ 1 հատ, 8. ազդանշանի ուժեղացուցիչ՝ 1 հատ 9. համակարգիչ՝ 1 լրակազմ: Համակարգը պետք է բաղկացած լինի՝ Գլխավոր կառավարման համակարգ հասցեային: Գույն՝ սպիտակ կամ բաց մոխրագույն / սև կամ մուգ մոխրագույն: Երեք կապի ալիքների առկայություն՝ լարային Ethernet և երկու SIM քարտ: Կենտրոնական միավորի միացման կարգավիճակի ցուցման առկայություն: Կենտրոնական ստորաբաժանումների միջև տվյալների փոխանցման գործառույթի աջակցություն: Տեղեկացումներ push ծանուցումների, SMS-ի և հեռախոսազանգի միջոցով: Արտաքին չափեր՝ 163

			× 163 × 36 մմ, + / - 2 %։ Աշխատանքի հաճախականությունը՝ 868.7-869.2 Հց։ Պարտադիր է, որ համակարգն ունենա անվտանգության ընկերության կառավարման վահանակին միացնելու հնարավորություն (այդ թվում 911-ին)։ Համակարգի հեռակա կարգավորման և կառավարման հնարավորություն։ Համակարգին միացվող սարքերի քանակը՝ ոչ պակաս 80-ից։ Մոնիթորինգի արձանագրություններ (протокол)՝ SIA (DC-09), SurGard (Contact ID), ADEMCO 685։ Ներկառուցված մարտկոց՝ նվազագույնը 43800 ժամ անընդմեջ աշխատելու հնարավորությամբ, ինչը պետք է ամրագրված լինի առանձին գործարանային երաշխիքով։ Ռադիոազդանշանի հեռավորությունը՝ ոչ պակաս քան 1500 մետր։ Ռադիոհաղորդակցության արձանագրություն՝ երկկողմանի, անվտանգ։ Առանձին անվտանգության խմբերի առավելագույն քանակը՝ 5-ից ոչ պակաս։ Միացված օգտատերերի առավելագույն թիվը՝ ոչ պակաս 40-ից։ Օգտատերերի համար առանձին անվտանգության խմբերի մուտքի իրավունքները կարգավորելու ունակություն։ Առնվազն երեք ռադիոազդանշանի կրկնիչ միացնելու հնարավորություն։ Ահազանգման լուսանկարչական բացահայտման և հաստատման սարքերի հետ աշխատելու ունակությունը պարտադիր է, 640 × 480 պիքսել։ Անվտանգության ժամանակացույցի ստեղծման գործառույթի աջակցությունը պարտադիր է։ Հնարավորություն տեսահսկման ինտեգրմանը նույն հավելվածով աշխատելու կարողությամբ։ Ազդանշանի խցանման փորձի տագնապային իրազեկման հնարավորություն, սարքը վնասելու դեպքում՝ (իրանը բացելու, պոկելու) իրազեկում օգտատիրոջը և անհրաժեշտ ստորաբաժանումներին։ Էլեկտրամատակարարում. 220 Վ։ Էլեկտրաէներգիայի անջատման դեպքում ինքնուրույն աշխատելու պարտադիր հնարավորություն։ Հնարավոր է աշխատել -10°C-ից մինչև +40°C ջերմաստիճանային միջակայքում։ Մինչև 75 % խոնավության պայմաններում աշխատելու հնարավորություն, պարտադիր տեղադրում և կարգաբերում, հրահանգների, տեխնիկական ուղեցույցի պարտադիր առկայություն։ EN IEC 62368-1:2020+A11:2020, EN 50131-1:2006 / A1:2009 /

			A2:2017 համապատասխանության սերտիֆիկատների առկայություն: Վերահսկման ստեղնաշար հասցեային: Գույնը՝ սպիտակ կամ բաց մոխրագույն / սև կամ մուգ մոխրագույն: Միացման տեսակը՝ անլար: Կոդի ընտրության դեմ պաշտպանության առկայություն: Հնարավորություն կառավարելու առնվազն 5 անվտանգության խմբեր: Համակարգի մասնակի զինման հնարավորություն: Յուրաքանչյուր օգտատիրոջ հաշվի համար առանձին գաղտնաբառ սահմանելու հնարավորություն: Օգտատերերի համար պարտադիր կոդ սահմանելու հնարավորություն: Զարթուցիչի ֆունկցիայի առկայություն: Անվտանգության կարգավիճակների նշում, մասնավորապես՝ «օբյեկտն անվտանգության տակ է», «օբյեկտն անվտանգության տակ չէ», «օբյեկտն անվտանգության տակ է «պարագիծ» ռեժիմում», «համակարգի խափանումներ»: Ռադիոկապի հեռավորությունը բաց տարածքում՝ անվտանգության համակարգի կենտրոնական սարքից ոչ պակաս, քան 1500 մետր է (խոչընդոտների և միջամտության բացակայության դեպքում): Արտաքին չափեր՝ 150 x 103 x 14 մմ, (+ /- 2 %): Ռադիոհաղորդակցության արձանագրություն՝ երկկողմանի, պաշտպանված: Աշխատանքի հաճախականությունը՝ 868.7-869.2 Հց: Հնարավոր է աշխատել -10°C-ից մինչև +40°C ջերմաստիճանային միջակայքում: Մինչև 75 % խոնավության պայմաններում աշխատելու հնարավորություն: Պարտադիր է տեղադրման հավաքածուի և հրահանգների առկայությունը: EN 301 489-1 V2.2.3, EN 301 489-3 V2.1.1, EN 62368-1:2014+A11:2017 համապատասխանության սերտիֆիկատների առկայություն: Ծխի կոմբո տվիչ հասցեային: Գույնը՝ սպիտակ կամ բաց մոխրագույն / սև կամ մուգ մոխրագույն: Միացման տեսակը՝ անլար: Զգայական տարր՝ ֆոտոէլեկտրական սենսոր, ջերմազույգ: Արտաքին չափեր՝ 124 × 124 × 45 մմ (+ /- 2 %): Ներկառուցված բարձրախոս տագնապ ձայնային ազդանշան տալու համար: Տեղային հրդեհի դեպքում նախազգուշացնող ազդանշանն ամբողջ օբյեկտում տարածելու հնարավորություն: Ներկառուցված մարտկոց նվազագույնը 43800 ժամ անընդմեջ աշխատելու

			հնարավորությամբ, ինչը պետք է ամրագրված լինի առանձին գործարանային երաշխիքով։ Սարքի կարգավիճակը տեղում և հեռակա ստուգելու ունակություն։ Պահեստային էլեկտրամատակարարման առկայություն։ Ռադիոկապի հեռավորությունը բաց տարածքում՝ անվտանգության համակարգի կենտրոնական սարքից ոչ պակաս, քան 1000 մետր։ Ռադիոհաղորդակցության արձանագրություն՝ երկկողմանի պաշտպանված։ Աշխատանքի հաճախականությունը՝ 868.7-869.2 ՀՀ։ Ազդանշանի արձակման և ուղարկման հնարավորություն համակարգին՝ տվիչի իրանը բացելու, մակերեսից պոկելու պարագայում։ 0°C-ից մինչև +50°C ջերմաստիճանային տիրույթում աշխատելու հնարավորություն։ Մինչև 80 % խոնավության պայմաններում աշխատելու հնարավորություն։ Պարտադիր է տեղադրման հավաքածուի և հրահանգների առկայությունը։ EN 14604:2005/AC:2008, EN IEC 63000:2018, համապատասխանության սերտիֆիկատների առկայություն։ Ելքի լուսանշան։ Լուսային ելքի ազդանշան՝ 12 Վ, 866.0–866.5 MHz-ով աշխատող ռելեով միանալու հնարավորությամբ։ Վթարային լուսավորության լամպ մարտկոցով։ Լարումը՝ 220-240 Վ, մարտկոցով գործելու ժամանակը՝ 5-10 ժամ, հզորությունը՝ 60 SMP LED։ Վթարային լուսավորության մոնտաժման հաղորդալար։ 2x1.5 տրամագծով, միջուկը՝ պղինձ, արտաքին շերտը՝ ՊՎՀ։ Ձեռքի հասցեային ազդասարք։ «Գույնը՝ կարմիր։ Միացման տեսակը՝ անլար։ Բացելու և պոկելու համար նախատեսված պաշտպանիչի առկայություն։ Պաշտպանիչ ծածկույթի առկայություն պատահական սեղմումը կանխելու համար։ Լույսի վիճակի ցուցիչի առկայություն։ Ռադիոկապի հեռավորությունը բաց տարածքում՝ անվտանգության համակարգի կենտրոնական սարքից ոչ պակաս, քան 1500 մետր (խոչընդոտների և միջամտության բացակայության դեպքում)։ Ռադիոհաղորդակցության արձանագրություն՝ երկկողմանի, պաշտպանված։ Աշխատանքի հաճախականությունը՝ 868.7-869.2 ՀՀ։ 0°C-ից մինչև +50°C ջերմաստիճանային տիրույթում աշխատելու հնարավորություն։ Մինչև 75%

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО «Мегамарт» в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԷԱՃԱՊՁԲ-2026/12-1-ԵՊԲՀ ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	марка	наименование производителя	технические характеристики
1			
			խոնավության պայմաններում աշխատելու հնարավորություն: Արտաքին չափեր՝ 102 × 104 × 39 մմ, (+ /- 2 %): Մոնտաժման հավաքածուի, դետեկտորը վերականգնելու բանալու և հրահանգների առկայությունը պարտադիր է: Ներկառուցված մարտկոց նվազագույնը 43800 ժամ անընդմեջ աշխատելու հնարավորությամբ, ինչը պետք է ամրագրված լինի գործարանային երաշխիքով: EN IEC 62368-1:2020+A11:2020, EN 54-11:2001, EN 54-11:2001 +A1:2005 համապատասխանության սերտիֆիկատների առկայություն: Ազդանշանի ուժեղացուցիչ: Գույնը՝ սպիտակ կամ բաց մոխրագույն/սև կամ մուգ մոխրագույն: Միացման տեսակը՝ անլար և լարով: Ռադիոկապի հեռավորությունը բաց տարածքում՝ անվտանգության համակարգի կենտրոնական սարքից ոչ պակաս, քան 1500 մետր (խոչընդոտների և միջամտության բացակայության դեպքում): Կենտրոնական համակարգի հետ կապը՝ 0,3 վրկ-ում: Ռադիոհաղորդակցության արձանագրություն՝ երկկողմանի պաշտպանված: Աշխատանքի հաճախականությունը՝ 868.7-869.2 ՀՀց: Աջակցություն ինքնավար տեղական շահագործմանը՝ կրկնիչի միջոցով կառավարման վահանակով աշխատող սարքերով: Էլեկտրամատակարարում. 220 Վ: Ներկառուցված մարտկոց՝ նվազագույնը 43800 ժամ անընդմեջ աշխատելու հնարավորությամբ, ինչը պետք է ամրագրված լինի գործարանային երաշխիքով: Բացելու և պոկելու համար նախատեսված պաշտպանիչի առկայություն:Հնարավոր է աշխատել -10°C-ից մինչև +40°C ջերմաստիճանային միջակայքում: Մինչև 75 % խոնավության պայմաններում աշխատելու հնարավորություն: Պարտադիր է տեղադրման հավաքածուի և հրահանգների առկայությունը: EN 50131-6:2017 / A1:2021, EN 301 489-1 V2.2.3, EN 301 489-3 V2.1.1 համապատասխանության սերտիֆիկատների առկայություն: Համակարգիչ i5 12 և ավել սերունդ, RAM 32 GB և ավել, SSD 500 GB և ավել: Մոնիտոր 22 դույմ և ավել: Լրակազմում նաև համապատասխան մկնիկ, ստեղնաշար ու բարձրախոս: Բոլոր նշված բաղկացուցիչ ապրանքատեսակները պետք է մատակարարվեն,	

			տեղադրվեն, մոնտաժվեն և կարգաբերվեն որպես մեկ միասնական ազդանշային համակարգ։ Մոնտաժային, տեղադրման աշխատանքները ոչ մի կերպ չպետք է խանգարեն օբյեկտների բնականոն աշխատանքին՝ պահպանելով սանիտարահիգիենիկ բոլոր նորմերը։ Առաստաղի բարձրությունները կազմում են 2,4 - 4,5 մետր՝ կախված մասնաշենքից և մասնաշենքի կոնկրետ նշանակության հատվածներից։ Աշխատանքները պետք է իրականցվեն այնպես, որ պահպանվի մինչև տեղադրման պահը ունեցած շենք/շինության արտաքին տեսքը։ Աշխատանքների արդյունքում շենքի վնասվածքների, արտաքին միջամտությունների համար ամբողջական պատասխանատվություն է կրում մատակարար կազմակերպությունը, որը վնասը պատճառելուց տասնօրյա ժամկետում պետք է վերացնի պատճառված վնասը։ Աշխատանքների կատարման օրական գրաֆիկը պետք է նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ։ Աշխատանքները իրականացնել ըստ շինարարական նորմերի։ Տեղադրված տվիչները պետք է անվանվեն պատվիրատուի պահանջի համաձայն։ Աշխատանքների ավարտից հետո ընդունում-հանձնման հետ մեկտեղ մատակարար կազմակերպությունը պատվիրատուին է ներկայացնում համակարգի ներդրման նախագիծը : Մատակարար կազմակերպությունը պետք է ունենա ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից տրված շինարարության իրականացման լիցենզիա 1-ին կամ 2-րդ դաս, համապատասխան ներդիրով՝ կապի համակարգեր (հեռահաղորդակցության և ազդանշանային համակարգեր, հաղորդակներ, ընդունիչներ, անտենաներ, ուժեղարարներ)։ Ապահովել շինարարության ժամանակ օգտագործվող շինարարական նյութերի որակը հաստատող փաստաթղթեր (տեխնիկական անձնագրեր և այլ) և դրանց համապատասխանությունը ստանդարտներին, տեխնիկական ու այլ նորմատիվային պահանջներին։ Ընդհանուր համակարգի համար երաշխիքային ժամկետ՝ առնվազն 3 տարի։ Ապրանքը, գույքն ու սարքավորումները՝ նոր են և չօգտագործված։ 1